ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի մասին

Հարգելի բաժնետեր

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը (գտնվելու վայրը՝ ք.Երևան, Բուզանդի փողոց, 87-րդ շենք, թիվ 85) 2020 թվականի փետրվարի 28-ին հրավիրում է բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով՝ որոշումների ընդունման հեռակա քվեարկության (հարցման) եղանակով:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվել է 2020 թվականի փետրվարի 10-ի դրությամբ:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգը կցվում է սույն ծանուցմանը:

Ժողովում քննարկվող հարցերին վերաբերող նյութերին Դուք կարող եք ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչական շենքում (ք.Երևան, Բուզանդի փողոց, 87-րդ շենք, թիվ 85 հասցեում), ինչպես նաև համացանցի Բանկի տնային էջում (www.araratbank.am)՝ սկսած 2020 թվականի փետրվարի 11-ից մինչև 2020 թվականի փետրվարի 28-ը ժամը 16:00-ն:

Միաժամանակ սույն ծանուցմանը կից Ձեզ ենք ներկայացնում Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկը:

Հարգանքով՝

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Գործադիր տնօրենի ժ/պ՝ Կարեն Սարգսյան